

VAR AND EM

CONSULTING

PARTNERS

«ՎԱՐ ԸՆԴ ԷՄ ՓԱՐԹՆԵՆՍ
ԲՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ

ՀՀ Երևան, Կ. Ռիլնեցու 3-րդ փակ, 7/6 Հեռ 23-13-91,

E-mail: vardangrig@mail.ru

ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՌեՆեսա» ՓԲԸ բաժնետերերին և
Ընկերության գործադիր տնօրենին

«13» մարտի 2007թ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌեՆեսա» ՓԲԸ 01.01.2006թ մինչև 31.12.2006թ ներառյալ ընկած ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները՝ Հաշվապահական հաշվեկշիռը, Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը և Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման և հաշվապահական հաշվառման ճշգրիտ համակարգ պահելու համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին /աուդիտի ազգային ստանդարտներին ու գործնական փորձին/ համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունները կազմելու ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքը ձևավորելիս մենք նկատի ենք ունեցել, որ 2005թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առկա է աուդիտորական եզրակացություն և 01.01.2006թ դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդների արժանահավատության վերաբերյալ ապացույցներ ինքնուրույն ձեռք բերելու խնդիր չենք քննարկել:

Մեր կարծիքով, բացառությամբ այն ուղղումների ազդեցության (եթե այդպիսիք կլինեն), որոնք կարող էին անհրաժեշտ համարվել վերը նշվածի հետևանքով, ֆինանսական հաշվետվությունները Հնկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2007թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին, Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Տնօրեն



Վ. Գրիգորյան

Աուդիտոր



Ա. Մեսրոպյան

